«ԹԵԼ-ՍԵԼ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐԿՎՈՂ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆՆԵՐ և ՊԱՅՄԱՆՆԵՐ (ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ)

TELCELL SERVICE

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն հրապարակային պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանում է «ԹԵԼ-ՍԵԼ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ (այսուհետ՝ Վարձատու) և Վարձատուին պատկանող լիցքավորման սարքերի օգտագործման համակարգից (այսուհետ՝ Համակարգ) օգվող/օգտագործման ցանկություն հայտնած անձի (այսուհետ՝ Վարձակալ) Վարձույթի ծառայությունից (այսուհետ՝ Ծառայություն) օգտվելու վերաբերյալ պայմանները, որը ՀՀ գործող Քաղաքացիական օրենսգրքին համապատասխան, հանդիսանում է Վարձատուի հայտարարած Ծառայություններից օգտվելու՝ պաշտոնական գրավոր հրապարակային առաջարկ (այսուհետ՝ Ծառայություններից օգտվելու օֆերտա և (կամ) Օֆերտա)՝ ուղղված Համակարգում ֆիզիկական և իրավաբանական անձանց ծառայությունների մատուցմանը:

1.2. Ծառայություններից օգտվելու օֆերտան կարող է ներկայացվել առցանց կամ Վարձատուի սահմանած այլ եղանակով:

1.3. Ընդունելով Օֆերտայի պայմանները՝ Վարձակալը հաստատում է, որ ամբողջությամբ ծանոթացել է և ամբողջ ծավալով անվերապահ ընդունում է Պայմանագրի պայմանները, Ծառայություններից օգտվելու կանոններն ու ծառայությունների դիմաց գանձվող վճարները, որոնց գործող տարբերակները զետեղված են Վարձատուի պաշտոնական կայքում և (կամ) «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից սպասարկվող Telcell Wallet բջջային հավելվածի միջոցով (Վարձատուն և Վարձակալը՝ այսուհետ միասին Կողմեր):

1.4. Վարձատուն մատուցում է Ծառայություններ, Վարձակալն օգտվում է Ծառայություններից՝ ՀՀ գործող օրենսդրության, Ծառայություններից օգտվելու կանոնների և Պայմանագրի պայմանների համաձայն:

1.5. Եթե Վարձակալը չի ընդունում Ծառայություններից օգտվելու կանոններն ու Պայմանագրի պայմանները, ապա Վարձակալն իրավասու չէ օգտվել Ծառայություններից:

1.6. Լիցքավորման սարք վարձակալելու դեպքում Վարձակալը համաձայնություն է տալիս սույն Պայմանագրին:

1.7. Վարձատուն մատուցում է հետևյալ տեսակների ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ).

ա) Լիցքավորման սարքի Վարձույթ յուրաքանչյուր օր 24/7 ռեժիմով,

բ) Հասանելի Լիցքավորման սարքի որոնում:

1.8. Ծառայությունների տեսակների, դրանց մատուցման եղանակների, հնարավոր գործառնությունների, ժամկետների, ծառայությունների համար սահմանված վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը սահմանվում է սույն Պայմանագրով նաև վերջիններիս վերաբերյալ իրազեկվում է նախքան յուրաքանչյուր գործարք կատարելը:

1.9. Վարձակալների ավտոմատ եղանակով սպասարկումը իրականացվում է 24/7 ռեժիմով: Պայմանագրով սահմանված գործողությունները, որոնք չեն իրականացվում ավտոմատ եղանակով, Վարձատուն իրականացնում է իր ընդունած ներքին իրավական ակտերով սահմանված աշխատանքային օրերին ու ժամերին:

1.10. Համակարգում հաշվարկները կատարվում են ՀՀ դրամով:

2. Հիմնական հասկացություններ

Սույն Պայմանագրի իմաստով.

2.1. **Համակարգ՝** Վարձատուին պատկանող Կայանների և լիցքավորման սարքերի օգտագործման համակարգ:

2.2. **Կայան՝** սարքավորում, որի միջոցով ապահովվում է լիցքավորման սարքերի փոխանցումը /տրամադրումը/ և ընդունումը /վերադարձը/, դրանց լիցքավորումը, ինչպես նաև նույնականացնում է Վարձակալի լիցքավորման սարքի լրակազմը:

2.3. **Լիցքավորման սարք՝** շարժական մարտկոց /Power bank/:

2.4. **Վարձատու՝** Կայանի և Լիցքավորման սարքի սեփականատեր «ԹԵԼ-ՍԵԼ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ:

2.5. **Վարձակալ՝** ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը Վարձատուի հետ կնքած Պայմանագրի համաձայն իրավունք է ստացել Համակարգից օգտվել և վարձակալել Լիցքավորման սարք:

2.6. **Վճարում՝** գործառույթ, որի արդյունքում Վարձույթի դիմաց վճարումը կատարվում է Էլեկտրոնային փողով՝ Ընկերության Telcell Wallet բջջային հավելվածում պատշաճ նույնականացված Վարձակալի հաշվառման հաշվում առկա Էլեկտրոնային փողը նվազեցնելով վճարման ենթակա գումարի չափով և Վարձատուի Հաշվառման Հաշիվը ավելացնելու միջոցով, կամ բանկային քարտի միջոցով:

2.7. **Բջջային հավելված՝** «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) շարժական սարքերում աշխատանքի ծրագրային ապահովում Ընկերության կողմից, որի միջոցով հասանելի է դառնում Հաշվի կառավարումը, ծառայություններից օգտվելը, ինչպես նաև Վարձատուի և Վարձակալի միջև տեղեկատվության (այդ թվում՝ էլեկտրոնային ծանուցումների) փոխանակումը:

2.8. **Ընկերություն՝** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն, որը ՀՀ տարածքում իրականացնում է էլեկտրոնային փողի թողարկում՝ ՀՀ օրենքների և իրավական այլ ակտերի համաձայն և Վարձատուի հետ կնքված պայմանագրի համաձայն համաձայնել է վճարումներ ընդունել Վարձատուի օգտին:

2.9. **Վարձույթի ժամկետը՝** Վարձույթի ժամանակահատվածը սկսվում է այն պահից, երբ Վարձակալը Լիցքավորման սարքը վերցնում է Վարձատուին պատկանող կայանից: Վարձակալությունը համարվում է ավարտված և վարձավճարի հաշվարկը դադարեցվում է այն պահին, երբ Վարձակալը Լիցքավորման սարքը պատշաճ կերպով վերադարձնում է Վարձատուին պատկանող ցանկացած ակտիվ կայանի: Լիցքավորման սարքի վարձակալության առավելագույն ժամկետը սահմանվում է 6 (վեց) օրացույցային օր:

3. Վարձույթի պայմանները

3.1. Վարձակալը ներբեռնելով Ընկերությանը պատկանող Telcell Wallet բջջային հավելվածը AppStore-ից և/կամ Google Play-ից հնարավորություն է ստանում վավերացնելու սույն Պայմանագիրը և սույն Պայմանագրով սահմանված վճարումը կատարելու՝ Լիցքավորման սարքը վարձակալելու նպատակով:

3.2. Լիցքավորման սարք վարձակալելու նպատակով նախապես ներկայացվում է Ծառայություններից օգտվելու օֆերտան: Լիցքավորման սարքը վարձակալելով՝ Վարձակալը Օֆերտային հավանություն է տալիս (ակցեպտավորում է), և այդ պահից ի վեր Օֆերտան, Պայմանագրի պայմանների, ծառայություններից օգտվելու կանոնների և ծառայությունների դիմաց գանձվող վճարների հետ մեկտեղ, կազմում է Վարձատուի և Վարձակալի միջև կնքված՝ կատարման համար պարտադիր պայմանագիր:

3.3. Ակցեպտավորելով/ստորագրելով սույն Պայմանագիրը՝ Վարձակալը հայտարարում է, երաշխավորում և հաստատում է, որ վերջինս.

- Կարդացել է սույն Պայմանագիրը, ինչի բովանդակության վերաբերյալ չունի առարկություններ /չծանոթանալով սույն Պայմանագրի պայմաններին, Վարձակալը կրում է բոլոր բացասական հետևանքների հետ կապված ռիսկերը/,

- Պարտավորվում է կատարել սույն Պայմանագրով սահմանված պահանջները,
- Ընկերությանը պատկանող Telcell Wallet բջջային հավելվածում պատշաճ նույնականացվել է և տրամադրել է իրական և ամբողջական անձնական տվյալներ,
- Թույլատրում է Վարձատուին մշակել իր անձնական տվյալները,
- Սույն Պայմանագրով սահմանված իր ցանկացած երաշխիքների և պարտավորությունների խախտումների արդյունքում Վարձատուի կրած վնասների չափը որոշվում է բացառապես Վարձատուի կողմից և հայեցողությամբ և անվերապահորեն համաձայն է Վարձատուին փոխհատուցել այդպիսի կորուստների համար,
- Ծանոթ է Լիցքավորման սարքի օգտագործման (շահագործման) և պահպանման պայմաններին (կանոններին) և Լիցքավորման սարքերը վարձակալելիս Վարձակալը պարտավորվում է պահպանել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջները, ինչպես նաև սույն Պայմանագրի պայմանները, օգտագործել Լիցքավորման սարքերը պատշաճ խնամքով և բարեխղճությամբ:

3.4. Սույն Պայմանագիրը Վարձակալի կողմից ակցեպտավորելու դեպքում Վարձատուն պարտավորվում է Վարձակալին մատուցել սույն Պայմանագրի պայմաններով ամրագրված Ծառայությունը, իսկ Վարձակալը պարտավորվում է օգտվել Ծառայությունից և Լիցքավորման սարքից սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան՝ ժամանակին ու ամբողջությամբ կատարելով սույն Պայմանագրով նախատեսված վճարումները:

3.5. Ակցեպտավորելով Օֆերտան Վարձակալը տալիս է նաև իր անվերապահ համաձայնությունը Օֆերտայում (Պայմանագրում) կատարված փոփոխություններին ու լրացումներին:

3.6. Եթե Վարձակալը համաձայն չէ սույն Օֆերտայի (Պայմանագրի) որևէ պայմանի հետ, ապա Վարձակալը պարտավոր է չօգտվել սույն Օֆերտայով (Պայմանագրով) նախատեսված Ծառայություններից, պարտավոր է Լիցքավորման սարքը չվերցնել, չօգտագործել (չշահագործել):

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Վարձակալն իրավունք ունի.

4.1.1. Օգտվել Վարձույթի Ծառայությունից, օգտագործել վարձակալված լիցքավորման սարքը համաձայն սույն Պայմանագրի՝ Վարձատուից պահանջելով կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները:

4.2. Վարձակալը պարտավոր է.

4.2.1. Սույն Պայմանագրի համաձայն ընդունել Լիցքավորման սարքը և խնամքով այն օգտագործել, խստորեն պահպանել սույն Պայմանագրի դրույթները, Վարձատուի

ցուցումներն ու առաջարկությունները, ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ Լիցքավորման սարքին վնաս պատճառելը կանխելու նպատակով:

4.2.2. Լիցքավորման սարքը չփոխանցել երրորդ անձանց և այն բացառապես անձամբ իրականացնել Լիցքավորման սարքի տիրապետումը և օգտագործումը: Ընդ որում Վարձակալն իրավունք չունի տնօրինել Լիցքավորման սարքը (ներառյալ, բայց ոչ սահմանափակված՝ չհանձնել այլ անձի օգտագործման և/կամ տիրապետման (ենթավարձակալության, ենթավարձույթ), չգրավադրել, չվաճառել:

4.2.3. Պատշաճ և ժամանակին՝ սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան՝ կատարել բոլոր վճարումները, ապահովել Ընկերությանը պատկանող Telcell Wallet բջջային հավելվածում բոլոր վճարումների իրականացման համար բավարար քանակությամբ դրամական միջոցների մնացորդը՝ նախատեսված սույն Պայմանագրով:

4.2.4. Լիցքավորման սարքի օգտագործման դադարեցման պահից այն վերադարձնել Վարձատուին պատշաճ տեխնիկական վիճակով, սույն Պայմանագրով նախատեսված կարգով: Լիցքավորման սարքը վերադարձնելիս անհրաժեշտ է տեղադրել այն բացառապես Վարձատուին պատկանող Կայաններից որևէ մեկի մեջ:

4.2.5. Օգտագործել Լիցքավորման սարքը բացառապես անձնական ոչ առևտրային նպատակներով, որը կապված չէ Վարձակալի ձեռնարկատիրական գործունեության հետ:

4.2.6. Չիրականացնել որևէ բարելավումներ/վատթարացում Լիցքավորման սարքում, չփոփոխել որևէ տեխնիկական կամ արտաքին բնութագրեր, չտեղադրել (չապամոնտաժել) ցանկացած սարքավորում, չիրականացնել վերանորոգումներ (անկախ բարդության աստիճանից) կամ չկազմակերպել դրա իրականացումը երրորդ անձանց կողմից, եթե այդպիսի գործողությունները գրավոր համաձայնեցված չեն Վարձատուի հետ:

4.2.7. Անմիջապես տեղեկացնել Վարձատուին Լիցքավորման սարքին պատճառված վնասի և/կամ դրա կորստի վերաբերյալ և կատարել համապատասխան չափով փոխհատուցում:

4.3. **Վարձատուն իրավունք ունի.**

4.3.1. Վարձակալից պահանջել կատարել սույն Պայմանագրով ստանձնած իր պարտականությունները:

4.3.2. Ընկերությանը հանձնարարել՝ իրականացնել Վարձակալի Telcell Wallet բջջային հավելվածից էլեկտրոնային փողի /դրամական միջոցների/ հաշվանցում/դուրս գրում՝ Վարձատուի նկատմամբ Վարձակալի դրամական պարտավորությունների դիմաց՝ համաձայն սույն Պայմանագրի, առանց հավելյալ համաձայնեցնելու այն Վարձակալի հետ, ինչի արդյունքում հաշվանցված գումարները փոխանցել Վարձատուին:

4.3.3. Ցանկացած պահի միակողմանի փոփոխել սույն Պայմանագիրը կամ միակողմանի հրաժարվել սույն Պայմանագրից՝ առնվազն մեկ օր առաջ ծանուցելով Վարձակալին Telcell Wallet բջջային հավելվածի միջոցով:

4.3.4. Վարձակալի անբարեխղճության մեջ կասկած առաջանալու դեպքում (մասնավորապես՝ Լիցքավորման սարքի գողություն/հափշտակման փորձ, մատուցված

ծառայությունների դիմաց դրամական միջոցների հաշվանցման/դուրս գրման անհնարինություն կամ նման միջոցների անբավարարություն և այլն) ամբողջությամբ կամ մասամբ արգելափակել Ծառայությունից օգտվելու հնարավորությունը:

4.3.5. Վարձակալի կողմից սույն Պայմանագրով առաջացած պարտքերի գանձման իր իրավունքները զիջել ցանկացած երրորդ անձանց ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան, առանց Վարձակալի հավելյալ համաձայնության:

4.4. **Վարձատուն պարտավոր է.**

4.4.1. Վարձակալին տրամադրել Լիցքավորման սարք՝ Վարձակալի կողմից սույն Պայմանագրով նախատեսված վճարը կատարելու պայմանով:

5. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Վարձակալը սույն Պայմանագրով նախատեսված ծառայություններից օգտվելու համար Վարձատուին վճարում է վարձատրություն:

5.2. Լիցքավորման սարքի վարձույթի 1 /առաջին/ վայրկյանից մինչև 60 /վաթսուն/ րոպեն ներառյալ ժամկետով վարձույթի դիմաց Վարձակալից գանձվում է 125 /հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ գումարի չափով վճար:

5.3. Լիցքավորման սարքի վարձույթի 60,1-րդ /վաթսուն րոպե և մեկ վայրկյանից/ րոպեից մինչ 24 (քսանչորս) ժամ (սկսած վարձույթի սկզբից) վարձույթի համար գանձվում է 1 /մեկ/ օրվա վարձույթի գինը, այն է 490 /չորս հարյուր իննսուն/ ՀՀ դրամ գումարի չափով վճար, ինչից հետո ևս յուրաքանչյուր օրվա (առաջին 24 ժամին հաջորդող 1 վայրկյանից մինչև 24 ժամվա) համար գանձվում է 490 /չորս հարյուր իննսուն/ ՀՀ դրամի չափով վճար:

5.4. Սույն Պայմանագրով վճարումներն /այդ թվում նաև տուգանքները/ իրականացվում են Վարձակալի Telcell Wallet բջջային հավելվածից էլեկտրոնային փողի /դրամական միջոցների/ դուրս գրման/հաշվանցման միջոցով: Վարձատուն իրավունք ունի վճարումների ընդունման գործընթացի իրականացմանը ներգրավել երրորդ անձանց:

5.5. Յուրաքանչյուր անգամ Վարձակալի կողմից Ծառայություններից օգտվելիս, ինչպես նաև Ծառայության օգտագործման յուրաքանչյուր մեկնարկից առաջ կարող է կատարվել էլեկտրոնային փողի հաշվառման հաշվի դրական հաշվեկշռի ստուգում: Ընդ որում Ծառայությունից հնարավոր է օգտվել էլեկտրոնային փողի հաշվառման հաշվին նվազագույնը 125 (հարյուր քսանհինգ) ՀՀ դրամի չափով էլեկտրոնային փողի առկայության դեպքում:

5.6. Սույն Պայմանագրով Վարձակալը անվերապահ թույլատրում է /անհետկանչելի հանձնարարում է/ Ընկերությանը իր էլեկտրոնային փողի հաշվառման հաշվի զրոյական կամ բացասական հաշվեկշռի պարագայում իր Telcell Wallet բջջային հավելվածին կցված բանկային քարտից և/կամ բանկային հաշվից համալրել էլեկտրոնային փողի հաշվառման հաշիվը՝ Վարձատուի հանդեպ տվյալ պահի դրությամբ ունեցած դրամական պարտավորության չափով:

5.7. Վարձակալը սույնով տալիս է իր անվերապահ համաձայնությունը և անհետկանչելի հանձնարարությունն Ընկերությանը՝ որևէ հիմքով Վարձատուի նկատմամբ Վարձակալի չկատարված պարտավորություն առաջանալու դեպքում Telcell Wallet բջջային հավելվածի էլեկտրոնային փողի հաշվառման հաշվից իրականացնել անակցեպտ գանձում՝ Վարձատուի առջև գոյացած պարտքը մարելու նպատակով:

5.8. Վարձակալի էլեկտրոնային փողի հաշվառման հաշվի և/կամ բանկային քարտի և/կամ բանկային հաշվի վրա դրամական միջոցների անբավարարության դեպքում Վարձատուն այդ մասին տեղեկացնում է Վարձակալին Ընկերության Telcell Wallet բջջային հավելվածի միջոցով: Վարձակալը պարտավորվում է մարել առաջացած պարտքը Վարձատուի կողմից ծանուցումն ուղարկելու պահից սկսած 24 ժամվա ընթացքում՝ ապահովելով էլեկտրոնային փողի հաշվառման հաշվի և/կամ բանկային քարտի և/կամ բանկային հաշվի վրա միջոցների դուրս գրման համար բավարար մնացորդ, ընդ որում, մինչև առաջացած պարտքի մարման պահը Վարձատուն իրավունք ունի Վարձակալին շնորհել պարտապանի կարգավիճակ և ամբողջությամբ կամ մասնակիորեն արգելափակել նրա հասանելիությունը Ծառայության նկատմամբ (Վարձատուն այդ մասին Վարձակալին տեղեկացնում է Վարձատուի համար ցանկացած հարմար եղանակով):

5.9. Վարձակալի կողմից սույն Պայմանագրով նախատեսված Լիցքավորման սարքը 6 /վեց/ օրացույցային օր չվերադարձնելու դեպքում (7-րդ օրվա 1-ին րոպեից սկսած) Վարձակալը պարտավորվում է Վարձատուին վճարել/փոխհատուցել լիցքավորման սարքի գինը, այն է՝ 9,900 /ինը հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ: Ընդ որում Լիցքավորման սարքի գինը վճարելը չի ազատում Վարձակալին մինչ այդ պահը Վարձատուի հանդեպ ունեցած դրամական պարտավորությունը կատարելուց:

6. Վարձակալի նույնականացումը

6.1. Ընկերության կողմից իր համապատասխան ներքին իրավական ակտերի համաձայն Telcell Wallet բջջային հավելվածում Վարձակալի նույնականացումը Վարձատուն ընդունում է պատշաճ նույնականացում:

7. Պայմանագրի կնքումը (ակցեպտավորումը) և գործողության ժամկետը

7.1. Պայմանագրի ակցեպտավորում (ընդունում) է համարվում Վարձակալի կողմից Լիցքավորման սարքի վարձույթը կամ վարձակալելը (կամ որևէ կերպ օգտագործելը կամ ստանալը):

7.2. Պայմանագրի ակցեպտավորումը նշանակում է Պայմանագրի բոլոր պայմանների լիովին և անվերապահ ընդունում՝ առանց որևէ բացառության կամ սահմանափակման, և հավասարազոր է գրավոր կնքված պայմանագրին:

7.3. Պայմանագրի պայմանների ակցեպտավորման ժամկետները սահմանափակ չեն:

7.4. Պայմանագրի շրջանակներում բոլոր ծանուցումները կատարվում են էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային փոստի, Telcell Wallet բջջային հավելվածի կամ կարճ հաղորդագրությունների միջոցով, որոնք համարվում են պատշաճ ծանուցում:

7.5. Պայմանագիրը կնքվում է անժամկետ: Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով: Վարձակալի (Օգտատիրոջ) հարմարության համար Պայմանագիրը, ինչպես նաև ծառայությունների դիմաց կիրառվող վճարները և կանոնները կարող են թարգմանվել ու հրապարակվել նաև այլ լեզուներով, ընդ որում՝ նման թարգմանությունների և հայերեն տարբերակի միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակա է հայերեն տարբերակը:

8. Բողոքների քննարկման կարգը

8.1. Պայմանագրի շրջանակներում խնդիրներ կամ անհամապատասխանություններ առաջանալու դեպքում Վարձակալը կարող է Վարձատուին ներկայացնել դիմում/բողոք:

8.2. Օգտագործողի դիմում/բողոքներն ընդունվում են գրավոր, այդ թվում՝
բ) փոստով (Վարձատուի փոստային հասցեով),
գ) էլեկտրոնային եղանակով (Վարձատուի էլեկտրոնային փոստի 100by@telcell.am հասցեով):

8.3. Վարձակալի դիմում/բողոքի քննարկումն իրականացվում է՝ ՀՀ օրենքներով, իրավական այլ ակտերով և Վարձատուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

9. Գաղտնիություն

9.1. Կողմերը պարտավորվում են չհրապարակել Պայմանագրի շրջանակներում ստացած տեղեկությունները, որոնք համարվում են գաղտնի՝ Կողմերից յուրաքանչյուրի համար:

9.2. Վարձակալը սույնով տալիս է իր համաձայնությունը Վարձատուին՝ մշակել վերջինիս հասանելի Վարձակալի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն և փաստաթղթեր, այդ թվում նաև անձը հաստատող փաստաթուղթը:

9.3. Պայմանագրի շրջանակներում գաղտնի չեն համարվում այն տեղեկությունները, որոնք Կողմերը կարող էին օրինական ճանապարհով ստանալ այլ աղբյուրներից՝ առանց գաղտնիության պայմանների խախտման:

9.4. Վարձակալի կատարած Գործարքների մասին տեղեկությունները Պայմանագիրը լուծելուց հետո պահպանվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետով:

10. Պատասխանատվություն և անհաղթահարելի ուժի ազդեցություն

10.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:

10.2. Վարձատուն պատասխանատվություն չի կրում իրենից անկախ պատճառներով փոստային, ինտերնետ և կապի այլ ծառայությունների խափանման, ինչպես նաև Վարձակալի հետադարձ կապի տվյալների փոփոխման պատճառով Վարձակալի՝ ժամանակին ծանուցում չստանալու համար:

10.3. Վարձատուն պատասխանատվություն չի կրում Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կապի, էներգամատակարարման և տեխնիկական այլ խափանումների պատճառով չկատարելու համար:

10.4. Վարձատուն պատասխանատվություն չի կրում այն դեպքի համար, երբ լիցքավորման սարքը Վարձակալի կողմից տեղադրվել է այլ ընկերությանը պատկանող կայանի մեջ:

10.5. Վարձակալը պատասխանատվություն է կրում լիցքավորման սարքը այլ ընկերության կայանի մեջ տեղադրելու համար 5.9. կետով սահմանված կարգով:

10.6. Վարձակալն ընդունում է, որ Լիցքավորման սարքը տրամադրվում է այնպես ինչպես կա (“AS IS”) դրանից բխող բոլոր ռիսկերով ու հետևանքներով հանդերձ և Վարձատուն պատասխանատվություն չի կրում Լիցքավորման սարքի օգտագործման (շահագործման) հետևանքով Վարձակալի և/կամ այլ անձանց կրած վնասների (այդ թվում առողջությանը պատճառված), այդ թվում բաց թողնված եկամուտի համար: Վարձատուն պատասխանավություն չի կրում, եթե Լիցքավորման սարքի արտաքին տեսքը, լիցքավորման չափը, տեխնիկական վիճակը կամ այլ պարամետրեր չեն համապատասխանի Վարձակալի սպասումներին ու ակնկալիքներին: Սույնով Վարձակալը համաձայնվում է, որ անկախ ամեն ինչից Վարձատուի ընդհանուր պատասխանատվության առավելագույն չափը սույն Պայմանագրի շրջանակներում չի գերազանցի 9,900 (ինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամը:

10.7. Վարձատուն և/կամ Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Վարձակալի կողմից իր Telcell Wallet բջջային հավելվածի կառավարման վավերապայմանները երրորդ անձանց տրամադրելու և վերջինիս միջոցով գործարքներ կատարելու դեպքում:

10.8. Լիցքավորման սարքի արտաքին տեսքի/ձևավորման ցանկացած փոփոխության (վնասի), այդ թվում որևէ պիտակ կպցնելու դեպքում Վարձակալը վճարում է Վարձատուին 9.900 (ինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր դեպքի համար:

10.9. Ձեռնարկատիրական, առևտրային նպատակներով Լիցքավորման սարքի, սույն Պայմանագրով չնախատեսված (կամ արգելված) օգուտ քաղելու նպատակով Լիցքավորման սարքը օգտագործելիս Վարձակալը Վարձատուին վճարում է 9.900 (ինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամի չափով տուգանք յուրաքանչյուր դեպքի համար:

10.10. Սույն Պայմանագրով նախատեսված բոլոր տուգանքների, ինչպես նաև ցանկացած այլ վճարների վճարումը կատարվում է չակցեպտավորված կարգով (առանց Վարձակալի հավելյալ համաձայնությունը ստանալու)՝ Վարձակալի Telcell Wallet բջջային հավելվածից համապատասխան դրամական միջոցները դուրս գրելու միջոցով:

11. Այլ պայմաններ

11.1. Վարձակալը երաշխավորում է, որ Պայմանագրի պայմաններն իրեն հասկանալի են և ամբողջությամբ ու անվերապահ ընդունելի:

11.2. Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.3. Վարձակալը հաստատում է, որ Telcell Wallet բջջային հավելվածով Լիցքավորման սարք վարձակալելիս իր ստորագրության անալոգ են համարվում.

ա) Telcell Wallet բջջային հավելվածի մուտքային տվյալները. մուտքային տվյալ(ներ)ի օգտագործմամբ իրականացվող բոլոր գործողությունները ճանաչվում են որպես անձամբ կատարված, մուտքային տվյալ(ներ)ի օգտագործմամբ ուղարկվող բոլոր փաստաթղթերը համարվում են անձամբ ստորագրված և ուղարկված, մուտքային տվյալ(ներ)ի օգտագործմամբ հաստատվող բոլոր փաստաթղթերը համարվում են անձամբ կողմից ստորագրված, այդ թվում նաև այն դեպքերում, երբ փաստաթուղթը հաստատվել է՝ «Հաստատում եմ» կոճակը սեղմելով,

բ) Telcell Wallet բջջային հավելվածում մուտքագրած էլեկտրոնային փոստի հասցեն. նշված էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված բոլոր նամակները համարվում են անձամբ ստորագրված և ուղարկված:

12. Վարձատուի վավերապայմանները

Անվանում՝	«ԹԵԼ-ՍԵԼ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
Հասցե՝	ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 1-ին հարկ
Հարկային հաշվառում՝	ՀՎՀՀ 00096209
Էլ.հասցե՝	100by@telcell.am